ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 օգոստոսի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

118
(2784)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԵՐԹԵՐԸ ՀԱՍԱՆ ՄԱՐԶԵՐ. ՀԱՐՑԸ ՉԻ ԼՈՒԾՎՈՒՄ



Ամիսներ առաջ ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունը եւ տարածքային անձնագրային ծառայություններն աշխատում էին գերծանրաբեռնված ռեժիմով, ինչը պայմանավորված էր մի շարք գործոնների միաժամանակյա առկայությամբ, մասնավորապես՝աճում էին ինչպես մեր հայրենակիցների կողմից հանգստանալու նպատակով արտերկիր մեկնելու համար անձնագիր ձեռք բերելու, դրանում օտարերկրյա պետություններում վավերականության նշում կատարելու համար դիմելու դեպքերը, այնպես էլ օտարերկրյա պետություններից Հայաստան ժամանած ՀՀ քաղաքացիների կողմից անձնագիր ստանալու, փոխանակելու դիմումները: Բացի այդ, նշվում է, որ անհամեմատ շատացել են նաեւ ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացվող դիմումները: Կուտակումներից խուսափելու համար անձնագրայիններում անցան էլեկտրոնային սպասարկման:

Թվում էր, թե այսքանով խնդիրը լուծված է, սակայն ավելի ուշ առաջացավ մեկ այլ խնդիր: Հերթերի կուտակումները մայրաքաղաքից տեղափոխվեց մարզեր: Պատճառը հերթերի ուշ հասնելն ու համակարգի թերի վիճակն էր: Երեւանից քաղաքացիները տեղափոխվում էին մարզերի անձնագրայիններ՝«հայավարի» իրենց գործարքը կատարելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության հետ՝ճշտելու, թե ինչ լուծում են նախատեսում այս դեպքում:

«Յուրաքանչյուր հերթագրման համար ամենաքիչը տրամադրվում է 7, ամենաշատը՝25 րոպե՝կապված ծառայության բովանդակությունից: Օրինակ՝ելքի կնիք տրվում է 7 րոպեում, իսկ անչափահասի անձնագրավորում՝25»:

Մեզ նաեւ տեղեկացրին, որ, իհարկե, այժմ հերթերը մայրաքաղաքում բեռնաթափվել են, սակայն անձնագրայինների աշխատանքի արդյունավետությունը դեռեւս քննարկման ու գնահատման փուլում է, քանի որ միրտուալ հերթերը ձգվում են շաբաթներ շարունակ:

«Եկող շաբաթվանից սկսած՝ ավելացվելու է նոր գործիքակազմ, որը ավելի արդյունավետ կդարձնի հերթագրումների համակարգը: Հաշվի առնելով, որ, օրինակ, լիազորված անձը կարող է միանգամից տասնյակ մարդկանց համար հերթագրվել եւ գալ գործարք կատարելու, թողել ենք այդ հնարավորությունը, բայց նաեւ կան քաղաքացիներ որոնք չարաշահում են սա եւ հերթագրվում են մի քանի անգամ միեւնույն գործարքի համար այն նպատակով, որ երբ հարմար լինի, այդ օրն էլ մոտենան: Մենք լիազորված անձանց համար այլ լուծում ենք մտածել, մնացածի համար սահմանափակում ենք դրել: Յուրաքանչյուր քաղաքացի կունենա մեկ անգամ հերթագրվելու հնարավորություն, եւ եթե չի կարողանա այդ օրը ներկայանալ, ստիպված կլինի եւս մեկ անգամ հերթագրվել, այսինքն՝միաժամանակ երեք տարբեր անձնագրայիններում երեք տարբեր օրեր պահել անձնագրավորման համար չի կարողանա»:

Վարչությունից տեղեկացրին նաեւ, որ նոր գործիքներ են մտածվել՝հերթագրումը չեղարկելու հետ կապված: Մասնավորապես՝քաղաքացիների՝ հերթագրումը չեղարկելու դեպքում այդ տեղերը կազատվեն, եւ այլ քաղաքացիներ հնարավորություն կունենան չեղարկված տեղերում հերթագրվելու: Եթե, օրինակ, քաղաքացին, անընդհատ թարմացնելով, տեսնում է, որ մոտակա հասանելի օր կա, կարող է հերթագրվել: Բացի սա, կա նաեւ ձեռքով կարգավորում: Սա իրենից ենթադրում է հետեւյալը. եթե քաղաքացու գործարքը հրատապ է, եւ այդ հրատապությունը հինավորված է որեւէ փաստաթղթով , օրինակ՝կա պլանավորված ճամփորդություն, եւ ավիատոմսերը գնված են, դրանք եւս իրականացվում են արտահերթ սպասարկումով: Այս հրատապությունը եւս ունի իր կատեգորիաները՝առողջական խնդիրներ, հաշմանդամներ, տարեցներ եւ այլն: Այսինքն՝ինչ-որ կարգավորումներ այժմ ձեռքով են արվում, մինչեւ կավտոմատացվեն:

Հարցին, թե արդյոք այս համակարգը չի պարունակում կոմերցիոն գործարքների հավանական ռիսկեր, տեղեկացրին, որ գործիքակազմը երկար թեստավորվելու է, որպեսզի «հերթ վաճառելու» ռիսկերից խուսափեն: Ավելի կոնկրետ արվելու է ամեն բան, որ չեղարկված հերթը ավելի ուշ երեւա օնլայն համակարգում, որպեսզի գործարքներ չկատարվեն:

Հետագայում մարզերում եւս կարող են անցնել հերթագրման օնլայն համակարգի:



«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հանգստյան օրերին՝շաբաթ ու կիրակի, ամբողջ թափով քարոզարշավ կանի. իշխող ուժը ողջ կուսակցական ու պետական ռեսուրսները կկենտրոնացնի քարոզարշավի վրա: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝առաջիկա երկու օրերին, բացի պատգամավորներից եւ ավագանու ցուցակի անդամներից, նաեւ պետական ողջ ապարատը կլծվի քարոզարշավին, քանի որ ոչ աշխատանքային օրեր են, ու պետական աշխատողները սահմանափակված չեն քարոզարշավին մասնակցելու: Իշխանությունն էլ հրահանգել է պետական կառույցների ղեկավարներին, որպեսզի ամեն ոչ աշխատանքային օրերին իրենց աշխատակիցներին եւս ակտիվ մասնակից դարձնեն քարոզարշավին: Ըստ ԸՕ-ի՝ քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոնյաներ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուները քարոզչություն իրականացնելիս սահմանափակված են օրենքով: Համաձայն օրենսգրքի 23-րդ հոդվածի՝պաշտոնատար անձանց արգելվում է պաշտոնեական լիազորությունները ծառայեցնել քարոզարշավ իրականացնելիս: Այսինքն՝ պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են քարոզարշավն իրականացնել ոչ աշխատանքային ժամերին եւ օրերին, ինչպես նաեւ չեն կարող օգտվել նրանց հատկացված ծառայողական տրանսպորտային միջոցներից: Նկատենք, որ այսօր արդեն քարոզարշավի 4-րդ օրն է, բայց ընտրություններին մասնակից 14 քաղաքական ուժերից միայն չորսը՝ՔՊ-ն, «Լուսավոր Հայաստան»-ը, «Հաղթանակ»-ը, «Մայր Հայաստանը», «Ապրելու երկիր»-ն են, որ ակտիվ քարոզարշավ են անում. մյուս ուժերը սահմանափակվում են միայն քննարկումներով ու փակ հանդիպումներով:

ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանի տարեկան հայտարարագիրը «դասական ոստիկանի» հայտարարագիր է. նա ոչինչ չունի իր անունով: Հիշեցնենք, որ Արմեն Խաչատրյանը մշտապես աշխատել է ոստիկանության համակարգում՝որպես տեսուչ: 2013-2018 թվականներից եղել է ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պլանավորման, հաշվառման եւ վերլուծության բաժնի պետ, ապա՝ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետի տեղակալ: Այսինքն՝աշխատել է նախկինների օրոք ամենակոռումպացված համակարգում որպես ճանապարհային տեսուչ, սակայն կարողացել է սյունեցու ճկունությամբ քաղաքականություն մտնել 2018 թվականի հեղափոխությունից հետո՝որպես սպիտակ ձեռնոցներով հեղափոխական: Նա, սակայն, ինչպես նախկինների օրոք, հասցրել է կնոջը, երեխաներին պետական օղակներում աշխատանքի տեղավորել «նոր Հայաստանում»: Եւ այսպես, «Ժողովուրդ» օրաթերթը պատգամավոր Խաչատրյանի պաշտոնական հայտարարագրից տեղեկացավ, որ 50-ամյա պաշտոնյան ոչ գույք ունի, ոչ էլ տրանսպորտային միջոց: Նա հայտարարագրել է մի բնակարան Մալաթիա-Սեբաստիա համայնքում, որը, ըստ նշվածի, պատկանում է այլ անձի, սակայն շահագործվում է պատգամավորի կողմից: Խաչատրյանը հայտարարագրել է 1986 թվականի արտադրության Vaz 2106 մակնիշի ավտոմեքենա, որը գնել է 2007 թվականին: Պատգամավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 950 դրամ, իսկ նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 8 մլն 425 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է ԱԺ աշխատակազմից: Արմեն Խաչատրյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարում կազմել է 140 հազար դրամ եւ 41 հազար դոլար: Նա վարկերի մարման համար ծախսել է 5 մլն 598 հազար դրամ: Խաչատրյանի կնոջ՝Մարիամ Մինասյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 319 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝1 մլն դրամ: Նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 3 մլն 510 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝Երեւանի պետական հումանիտար քոլեջից. ի դեպ, նա հենց այդ քոլեջի տնօրենն է: Խաչատրյանի որդին՝Էդուարդ Խաչատրյանը, հայտարարագրել է միանձնյա սեփականությամբ հողամաս, որը գտնվում է Արմավիրի մարզի Մայիսյան գյուղում. այն ձեռք է բերվել 2021 թվականին, սակայն 2022 թվականին այն օտարվել է 5 մլն դրամով Շանթ Պետրոսյանի կողմից: Տարեսկզբին որդին ուներ է 2 մեքենա՝Toyota մակնիշի, 2015 թվականի արտադրության, որը ձեռք է բերվել 2019 թվականին, եւ Nissan մակնիշի՝2011 թվականի արտադրության, 2021 թվականին ձեռք բերված: Տարվա ընթացքում ձեռք է բերել եւս մեկ մեքենա՝Volkswagen, 2002 թվականի արտադրության, որը նույն տարում օտարվել է 500 հազար դրամով: Նույն տարում օտարվել է նաեւ Nissan մակնիշի մեքենան 3 մլն 500 հազար դրամով: Տպավորություն է, թե մեքենաների առքուվաճառքի բիզնեսով է զբաղված եղել: Պատգամավորի որդու բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 707 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝2 մլն: Նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 17 մլն 420 հազար դրամ, որից 4 մլն 420 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԱԺ փորձագիտական վարչության պետաիրավական փորձաքննությունների բաժնից: Այսինքն՝պատգամավորի որդին աշխատում է ԱԺ-ում: Նրա մյուս եկամտները հաշվետու տարում օտարված գույքից ստացված եկամուտներն են: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարում կազմել է 3 մլն 989 հազար դրամ, իսկ վարկերի մարմանն ուղղված վճարումները կազմել են 14 մլն 260 հազար դրամ: Պատգամավորի դուստրը՝Սյուզան Խաչատրյանը, հայտարարագրել է միայն 500 հազար դրամ կանխիկ գումար: Որտեղից, ինչ ծագում ունի այն՝նշված չէ:



Սեպտեմբերի 17-ին կայանալիք Երեւանի ավագանու ընտրություններին մասնակից 14 ուժերն արդեն Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացրել իրենց հայտարարագրերը: 14 ուժերից ամենահարուստը «Քաղաքացիական պայմանագիր»-ն է: Տիգրան Ավինյանին որպես քաղաքապետի թեկնածու ներկայացրած կուսակցությունն ունի 45 անշարժ գույք Երեւանում եւ մարզերում, որոնք բոլորը վարձակալված են: Հետաքրքիր է, որ այս կուսակցության ամենամեծ գրասենյակը գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում՝ 1050 քառակուսի մետր տարածքով: Իսկ Երեւանի Հանրապետության փողոցում գտնվող վարչական շենքի մակերեսը 843 քմ է: Բացի այս անշարժ գույքերից, ՔՊ-ն ունի նաեւ շարժական գույք՝«Տոյոտա Տակոմա» մակնիշի: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամական միջոցները կազմում են 424 մլն դրամ, եկամտի աղբյուր են հանդիսանում կուսակցության անդամների անդամավճարներն ու նվիրատվությունները, որոնք մեկ տարվա ընթացքում կազմել են 586 մլն դրամ: «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը, որի քաղաքապետի թեկնածուն Դավիթ Խաժակյանն է, միայն մեկ անշարժ գույք ունի՝Բաղրամյան 1 հասցեում գտնվող: Կուսակցության դրամական միջոցները կազմում են 43 հազար դրամ եւ 668 եվրո, իսկ մեկ տարվա եկամուտն էլ 2 մլն 684 հազար դրամ է եղել, որը գոյացել է անդամավճարներից: Իսկ, ահա, «Ազգային առաջընթաց» կուսակցությունը, որի ցուցակը գլխավորում է նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը, ըստ հայտարարագրի, ոչ գույք ունի, ոչ եկամուտ, իսկ դրամական միջոցներն էլ 15 հազար դրամ է կազմել: Չնայած «Ապրելու երկիր» կուսակցությունը եւս շարժական կամ անշարժ գույք չի հայտարարագրել, սակայն ունի դրամական միջոցներ եւ եկամուտ: Մանե Թանդիլյանին որպես քաղաքապետի թեկնածու ներկայացրած կուսակցությունն ունի 481 հազար դրամ, իսկ, որպես նվիրատվություն, ստացել է 30 մլն դրամից ավելի գումար:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՃՆՇՈ՞ՒՄ ԵՆ

Վերջին շրջանում մամուլում պարբերաբար լուրեր են տարածվում այն մասին, որ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանն օրեր առաջ Արցախի անվտանգության խորհրդի նիստում տեղեկացրել է, որ որոշում է կայացվել Աղդամի ճանապարհով առեւտուր անելու մասին:

Արցախի նախագահի մամուլի խոսնակ Լուսինե Ավանեսյանն ավելի ուշ հերքել էր այս տեղեկությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի «Արդարություն» կուսակցության պատգամավոր Մետաքսե Հակոբյանը նշեց, որ Արայիկ Հարությունյանը հանդիպել է ԱԺ խորհրդարանական խմբակցությունների ղեկավարների հետ ու հայտարարել, որ Ադրբեջանի կողմից լուրջ ճնշում կա՝Աղդամի ճանապարհից օգտվելու համար, սակայն պատգամավորները կտրուկ դեմ են արտահայտվել դրան:

-Խորհրդարանական կուսակցությունների, խմբակցությունների ղեկավարների հետ հանդիպում է տեղի ունեցել, էլի խոսել ենք Արայիկ Հարությունյանի հետ, որտեղ ինքը, այո՛, այդ մասին խոսել է, որ Ադրբեջանի կողմից կա ճնշում եւ պահանջ՝ Ակնա-Ստեփանակերտ ճանապարհի շահագործման վերաբերյալ, ինչին կոնկրետ մեր կուսակցության ղեկավարը որպես պատասխան հնչեցրել է, որ մենք դեմ ենք, եւ նաեւ մի տեսակ անլուրջ է այդ ամենը, եւ չկա որեւէ փաստաթղթավորված պահանջ: Այսինքն՝որեւէ կերպ չձեւավորված եւ անհասկանալի խողովակներով հասնող պահանջներ են: Պետք չէ տրվել այդ ճնշումներին, սակայն որեւէ որոշում այս ձեւաչափով չէր կարող կայացվել, եւ, ի վերջո, որոշողը պետք է լինի իշխանությունը՝ երկրի նախագահը: Կարծես թե դրանից հետո որեւէ քննարկում տեղի չի ունեցել (համենայնդեպս, մենք տեղյակ չենք) ճանապարհի բացման վերաբերյալ, որովհետեւ դա մեկ հոգու կամքով չի կարող լինել, եւ չեմ կարծում, որ Արայիկ Հարությունյանը կգնա նման քայլի, քանզի ակնհայտ է, որ այդ դեպքում Արցախը կդառնա պաշարված ամրոց, եւ այլեւս արցախյան հիմնահարցը կմտնի փակուղի:

-Տիկին Հակոբյան, կառավարության վերջին նիստի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ տեղեկություններ կան, որ Ադրբեջանը պատրաստվում է միակողմանի բացել Լաչինի միջանցքը: Ի՞նչ տեղեկություններ ունեք, եւ ի՞նչ կարելի է ենթադրել այս հայտարարությունից առհասարակ: Արդյոք սա չի՞ նշանակում, որ այսկերպ ցանկանում են Արցախը հայաթափել:

-Իմ առաջին արձագանքը ելույթին քաոսային էր այն առումով, որովհետեւ ես չեմ պատկերացնում՝ կա արդյոք մեկ այլ երկրում ղեկավար, որը պարզապես ինֆորմացիայի կրիչ է կամ փոխանցող: Այսօր իշխանությունը զաթված անձը ՀՀ-ում քաղաքական եւ պետական գործիչ չէ, եւ ինչպիսին եղել է իր ողջ կյանքում՝ դեղին մամուլի կարկառուն ներկայացուցիչ, այնպես էլ մնացել է: Իր բոլոր ինֆորմացիաները օդում կախված լուրեր են: Եւ երբ որ երկրի վարչապետն է իրեն այդպես պահում, դա տարօրինակ է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ

ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ադօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է. «Հյուրընկալվել եմ Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ եւ լիազոր դեսպան ն.գ. տիկին Քրիստինա Ալիսոն Քվինին:

Ներկայացրել եմ Հայաստանում եւ Արցախում առկա իրավիճակը, անվտանգային սպառնալիքներն ու մարտահրավերները:

Խոսելով Արցախում ստեղծված ծանր պայմանների մասին՝ ընդգծել եմ, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումն այլընտրանք չունի. այն միակ լուծումն է, որ կարող է կանխել ցեղասպանությունն Արցախում: Անդրադառնալով Հայաստանի սահմաններում տիրող լարվածությանը՝իմ անձնական օրինակով պատմել եմ, թե ինչպես ենք կրակոցների տակ անցկացնում գիշերները հայրենի Վարդենիսում:

Տիկին դեսպանին ներկայացրել եմ Հայաստանում ժողովրդավարության իրական պատկերն ու սպառնալիքները, մասնավորապես՝թե ինչպես է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն «օկուպացրել» ՀՀ Ազգային ժողովը: Անդրադարձել եմ նաեւ Հայաստանում քաղբանտարկյալների (օրինակ՝ ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը) գոյությանն ու մարդու իրավունքների մյուս սպառնալիքներին:

«Կեղծ ժողովրդավարության վառ դրսեւորումներից են Երեւանի քաղաքապետի ընտրությունները, որոնք արդեն իսկ ընթանում են կեղծիքներով, քանի որ Հայաստանում իշխանական պաշտոնյաները, գրեթե առանց բացառության, մասնակցում են իշխանության թեկնածու Տիգրան Ավինյանի նախընտրական քարոզարշավին. անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծվել Երեւանի քաղաքապետի մյուս թեկնածուների համար: Ընտրակեղծիքներն արդեն սկսվել են»,- ընդգծել եմ իմ խոսքում:

Հանդիպմանն անդրադարձել եմ նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերին:

Շնորհակալ եմ դեսպան Քվինին հրավերի եւ իմ կողմից բոլոր բարձրացված հարցերը հետաքրքրությամբ լսելու համար»:

ԿՆՇԱՆԱԿՎԻ՞ ԴԵՍՊԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանը նշանակվելու է Ռուսաստանում ՀՀ դեսպան:

Իշխանությունը պատրաստվում է հետ կանչել ՌԴ-ում Հայաստանի դեսպան Վաղարշակ Հարությունյանին ու նրա պաշտոնին նշանակել պատգամավոր Գուրգեն Արսենյանին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանն այս առնչությամբ ասաց. «Ինձ համար դա չքննարկվող հարց է. օրը կգա, կհասկանանք: Ես հիմա երկրում չեմ, չեմ կարող որեւէ բան ասել»:

Հատկանշական է, որ Գուրգեն Արսենյանը մշտապես աչքի է ընկել իր հակառուսական սուր հայտարարություններով, քննադատել է Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունները խորացնելը ու կողմ է արտահայտվել Հայաստանի՝ՀԱՊԿ-ից դուրս գալուն:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԸ ՆԻՍՏ Է ԱՐԵԼ

Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ, «Հայաստան» դաշինքի ղեկավար Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ օգոստոսի 24-ին կայացել է ԱԺ «Հայաստան» խմբակցության նիստ: Այս մասին հայտարարություն է տարածել դաշինքը:

Նիստի քննարկման առանցքային թեման եղել է Լաչինի միջանցքի փակման հետեւանքով Արցախում ստեղծված ծանր իրավիճակը, հնարավոր հանգուցալուծումները:

Անդրադարձ է կատարվել նաեւ առաջիկայում կայանալիք Երեւանի ավագանու ընտրություններին: Խմբակցությունը որոշել է իր աջակցությունը հայտնել «Մայր Հայաստան» դաշինքին, որի քաղաքապետի թեկնածուն «Հայաստան» խմբակցության նախկին պատգամավոր Անդրանիկ Թեւանյանն է:

Քննարկվել են նաեւ ԱԺ առաջիկա նստաշրջանի շրջանակներում խմբակցության հետագա անելիքները:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԱՆԴԱՄԸ

Երեւանի նախկին քաղաքապետ, դերասան Հայկ Մարությանն իր «Քաղաքապետը» մոնոներկայացման մեջ մի քանի ուշագրավ բացահայտումներ էր արել՝ իր պաշտոնավարման ընթացքում տեղի ունեցած միջադեպերի վերաբերյալ: Դրանցից ամենազավեշտալին թերեւս իր մամուլի խոսնակ Հակոբ Կարապետյանի եւ ավագանու «Իմ քայլը» խմբակցության անդամներից մեկի մասնակցությամբ միջադեպն էր:

Մասնավորապես, քաղաքապետարանի նախկին խոսնակ Հակոբ Կարապետյանը սուրճ խմելիս է եղել, մոտեցել է ավագանու անդամը եւ ասել, թե քաղաքապետարանի սուրճի սարքը Հայկ Մարությանի եղբորը՝ Արման Մարությանին է պատկանում:

Ինչպես իր ներկայացման մեջ Մարությանն է պարզաբանում, սուրճի սարքը իրականում իր կինոռեժիսոր եղբորը՝ Արման Մարությանին չէր պատկանում, այլ մեկ ուրիշ «Արման Մարության» ԱՁ-ի, բայց ավագանու իմքայլական անդամն անգամ չի էլ նկատել, որ հայրանունները չեն համընկնում, ուստի չի կարող սուրճի սարքի տեր Արման Մարությանն իր եղբայրը լինել:

«Ժողովուրդ» օրաթերթին հաջողվեց պարզել, որ իրականում ավագանու այդ առեղծվածային անդամը Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանն է, որը 2018-2021 թթ. Երեւանի ավագանու անդամ է եղել: Նա թեեւ 2020 թվականի դեկտեմբերից զբաղեցրել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալի պաշտոնը, բայց միայն 2021թ.-ի ապրիլին է ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին դիմում ներկայացրել:

Ի դեպ, Դավիթ Խաչատրյանին քաղաքապետարանում առավել շատ հիշում են ոչ թե իր ակտիվ գործունեությամբ, իր հեղինակած նախագծերով, այլ նրանով, որ սուրճի բաժակը ձեռքին մշտապես պտտվում էր քաղաքապետարանում:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Ի ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ

«Ես աջակցում եմ ԼՂ 120.000 բնակիչներին եւ նրանց պաշտպանող հայկական սփյուռքին». «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամ Ադամ Շիֆի՝ X-ի (նախկին՝ «Թվիթեր») միկրոբլոգում կատարված հրապարակումից:

«Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակումը պետք է դադարեցվի: ԱՄՆ-ն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը եւ ասել է՝ «Այլեւս երբեք»:

Մենք պետք է անենք ավելին, քան պարզապես խոստում տալը: Մենք պետք է գործենք»,-ասել է նա:

ՀԵՌԱԽՈՍԱՔՐՈՒՅՑ

ՆԱԽԱՐԱՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Սլովակիայի Հանրապետության արտաքին եւ եվրոպական գործերի նախարար Միրոսլավ Վլախովսկու հետ:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին, որ Արարատ Միրզոյանն իր գործընկերոջն է ներկայացրել Լեռնային Ղարաբաղում ահագնացող հումանիտար ճգնաժամի մանրամասները եւ 120 հազար բնակչության համար ստեղծված ծանրագույն պայմանները, որոնք հետեւանք են Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման: Նախարար Միրզոյանը շեշտել է, որ ԼՂ սննդի, դեղորայքի մատակարարումներ չեն իրականացվում նույնիսկ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով, որի գործունեությունը եւս խոչընդոտվում է Ադրբեջանի կողմից: Վերջինիս համատեքստում ՀՀ արտաքին գործերի գերատեսչության ղեկավարը հիշատակել է հուլիսի 29-ին ԼՂ-ից բուժման նպատակով ՀՀ տեղափոխվող Վագիֆ Խաչատրյանի՝ Ադրբեջանի սահմանապահ ծառայության կողմից առեւանգման դեպքը՝ որպես միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտում եւ ԼՂ բնակչությանն ահաբեկելուն ուղղված անընդունելի քայլ:

«Արարատ Միրզոյանն ընդգծել է, որ Ադրբեջանի գործելաոճը, որը շարունակվում է՝ ի հեճուկս միջազգային գործընկերների բազմաթիվ հասցեական կոչերի, ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի պարտադիր իրավաբանական ուժ ունեցող երկու որոշումների, ԼՂ-ում էթնիկ զտումների բացահայտ քաղաքականություն է, եւ դրա հետագա կանխումը պահանջում է միջազգային դերակատարների առավել խիստ դիրքորոշումներ եւ գործուն քայլեր»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ շեշտվել է, որ ներկա իրավիճակում հումանիտար ճգնաժամի հաղթահարման համար հրամայական է Լաչինի միջանցքի արգելափակման վերացումը: Նշվել է, որ Ադրբեջանի կողմից իրավիճակի հետագա սրումը կարող է հարվածի տակ դնել տարածաշրջանում կայանության հաստատմանն ուղղված ջանքերը:

ՀՀ ԱԳՆ տեղեկացմամբ՝ հեռախոսազրույցի ընթացքում երկուստեք ընդգծվել է նաեւ երկու երկրների միջեւ համագործակցության զարգացման հարցում առկա զգալի ներուժն արդյունավետ օգտագործելու պատրաստամակությունը:

Նշենք նաեւ, որ օգոստոսի 25-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Նիկոլաս Սխերմերսին՝ Հայաստանում դիվանագիտական առաքելության ավարտի կապակցությամբ:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձ են կատարել նաեւ տարածաշրջանային կայունությանը վերաբերող հարցերի՝ մասնավորապես քննարկելով Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում խորացող հումանիտար ճգնաժամը: Կարեւորելով միջազգային կազմակերպությունների, երկրների, այդ թվում՝ Նիդերլանդների կողմից արտահայտված հստակ դիրքորոշումները՝ Արարատ Միրզոյանն ընդգծել է Արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի եւ հուլիսի 6-ի որոշումներին համապատասխան Լաչինի միջանցքի արգելափակման անհապաղ վերացման ուղղությամբ քայլեր իրականացնելու հրատապությունը:

Նախարար Միրզոյանը ընդգծել է, որ Լեռնային Ղարաբաղում իրավիճակը մոտ է հումանիտար աղետի վերածվելուն եւ կարող է էականորեն խաթարել տարածաշրջանում կայունության հաստատման գործում Հայաստանի եւ միջազգային հանրության ջանքերը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԹՌԻՉՔԸ ՀԵՏԱՁԳՎԵՑ

Երեւան-Կապան օգոստոսի 25-ին կայանալիք չվերթը հետաձգվել է: Այս մասին հայտնում են «ՆՈՎԷՅՈ» ավիաընկերությունից:

Նշվում է, որ հետաձգված թռիչքի պատճառը Ջերմուկի եղանակային պայմաններն են, քանի որ այդ պահին այնտեղ մառախլապատ է եղել: Նկատենք, որ հաջորդ թռիչքը նախատեսված է երկուշաբթի օրը:

ԿՄԵԿՆԵՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գլխավորած պատվիրակությունը կմեկնի Մոսկվա: ՀՀ կառավարության լրատվական ծառայությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ պատվիրակությունը օգոստոսի 28-30-ը կմասնակցի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստին:

Նշենք նաեւ, որ պատվիրակության կազմում են էկոնոմիկայի փոխնախարար Նարեկ Տերյանն ու ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանը:

ԱՐՑԱԽԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Օգոստոսի 25-ին ԼՂ առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 10 բուժառուներ ուղեկցողների հետ միասին անհետաձգելի մասնագիտացված բժշկական օգնություն ստանալու համար, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ, տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ:

«Արեւիկ» բուժմիավորումում այս պահին ստացիոնար բուժում է ստանում 34 երեխա, 2-ը գտնվում են նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում է ստանում 91 հիվանդ, 5 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որից 2-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՄԱԿ–Ի ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՓԱԿՎԵՑ

Շվեյցարիայի Ժնեւ քաղաքում գտնվող ՄԱԿ-ի եվրոպական կենտրոնակայանը երեկ փակվել է: Նշվում է, որ այն փակվել է՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

Reuters գործակալությունը տեղեկացնում է՝ կոնկրետ անվտանգային ինչ խնդիր է առաջացել, ՄԱԿ-ի եվրոպական գրասենյակում չեն նշել:

«Ազգերի պալատի» շենքում է գտնվում ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհուրդը: Ըստ Retuers-ի՝ այն նաեւ հանգույց է հանդիսանում դիվանագետների, հումանիտար ոլորտի աշխատողների եւ պետական պաշտոնյաների համար:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՇՂԹԱ

ՀՀ քննչական կոմիտեի հատկատես կարեւոր գործերով քննության գլխավոր վարչությունում ավարտվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Այս մասին տեղեկացնում են ՀՀ քննչական կոմիտեից:



Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ 2023թ. ապրիլի 5-ին ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու եւ օգտագործելու կասկածանքով Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժին էր ներկայացվել Երեւան քաղաքի 25-ամյա մի բնակիչ, ում անձնական խուզարկությամբ հայտնաբերվել էր 0.26 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց:

Դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի, ստացված տվյալների հիման վրա նախաձեռնված այլ վարույթների շրջանակում իրականացված վարութային եւ ապացուցողական գործողությունների արդյունքում բացահայտվել էր հաջորդաբար միմյանց թմրամիջոցներ իրացնելու շղթա:

Դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթները հետագայում միացվել էին մեկ վարույթում, որի նախաքննությունը շարունակվել է ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում:

Իրականացված քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել են հանցավոր շղթայում ներգրավված անձանցից հինգի ինքնությունները:

Քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ շղթայում ներգրավված անձանցից մեկը՝ Հ.Բ.-ն, ավտոմեքենայի առուվաճառքի գործընթացի շրջանակում Երեւան քաղաքի բնակիչ, 40-ամյա տղամարդուն առաջարկել է, որպեսզի ավտոմեքենայի արժեքի մի մասի գումարի դիմաց նրան տա «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց եւ այդկերպ վճարի ավտոմեքենայի համար պարտք մնացած գումարը: Համաձայնության գալով՝ այդ անձը 40-ամյա տղամարդուն ապօրինի իրացրել է առանձնապես խոշոր չափերով՝ 4.8 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց:

Պարզվել է նաեւ, որ Հ.Բ.-ն հանցավոր շղթայում ներգրավել է նաեւ Վաղարշապատ քաղաքում բնակվող իր ընկերուհուն: Տվյալներ են ստացվել այն մասին, որ Հ.Բ.-ն առանձնապես խոշոր չափերով՝ 5.81 գրամ «Մեթամֆետամին», առանձնապես խոշոր չափերով՝ 84.56 գրամ «Ափիոն» եւ առանձնապես խոշոր չափերի՝ 358.635 գրամ «Հաշիշ» տեսակի թմրամիջոցները պահել է նրա՝ Վաղարշապատ քաղաքում գտնվող տանը: Նախաքննության ընթացքում օրենքով սահմանված կարգով կատարված խուզարկությամբ նշված բնակարանում հայտնաբերվել են նաեւ էլեկտրոնային կշեռքներ, տարբեր չափերի պոլիէթիլենային տոպրակներ, բազմաթիվ կտրատված փայլաթիթեղներ, ապակե կոլբաներ, քաղցրավուն հոտով պլաստմասսե ձողիկներ, որոնց ծայրերին առկա են փայլաթիթեղներ, իսկ ներսում՝ թմրամիջոցին նման հետքեր, ինչպես նաեւ 1.912.005 ՀՀ դրամին համարժեք 45 հատ 100 եվրո անվանական արժեքով կեղծ թղթադրամներ:

Քննությամբ պարզվել է, որ Հ.Բ.-ի կողմից շահադիտական դրդումներով, իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով՝ 5.81 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցից խոշոր չափերով՝ 1.01 գրամը հայտնաբերվել է նշված բնակարանում կատարված խուզարկության ժամանակ, իսկ առանձնապես խոշոր չափերով՝ 4.8 գրամը վաճառելու եղանակով ապօրինի իրացրել է Երեւան քաղաքի 40-ամյա բնակչին, որը խոշոր չափերով՝ 0.26 գրամը նույն ամիսների ընթացքում վաճառելու եղանակով ապօրինի իրացրել է Երեւան քաղաքի 56-ամյա մեկ այլ բնակչի, իսկ վերջինս էլ իր հերթին նշված խոշոր չափերով՝ 0.26 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցից զգալի չափերով՝ 0.1 գրամը վաճառելու եղանակով ապօրինի իրացրել է Երեւան քաղաքի բնակիչ, 25-ամյա երիտասարդին, ինչպես նաեւ վերը նշված բնակարանում իրացնելու նպատակով պահել է 1.912.005 ՀՀ դրամին համարժեք 45 հատ 100 եվրո անվանական արժեքով կեղծ թղթադրամներ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Հ.Բ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ 267-րդ հոդվածի 1-ին մասով, վերջինիս ընկերուհուն՝ 46-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 46-267-րդ հոդվածի 1-ին մասով, 40-ամյա տղամարդուն՝ 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 25-ամյա երիտասարդին՝ 396-րդ հոդվածի 1-ին մասով, 56-ամյա տղամարդուն՝ 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Մեղադրյալներից երկուսի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը, մեկի նկատմամբ՝ տնային կալանքը, մեկի նկատմամբ՝ բացակայելու արգելքը, եւս մեկի նկատմամբ՝ վարչական հսկողությունը:

Հինգ մեղադրյալի մասով հայտարարվել է նախաքննության ավարտի մասին, եւ վարույթի նյութերն ուղարկվել են հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու համար:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության շղթայում այլ անձանց առկայության, թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը պարզելու, ինչպես նաեւ կեղծ թղթադրամներ պատրաստելու մասով նախաքննությունը շարունակվում է:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնում քննություն է իրականացվում՝ պարզելու Ալավերդի քաղաքի 46-ամյա բնակչի սպանության դեպքի հանգամանքները:

2023 թվականի օգոստոսի 24-ին՝ ժամը 14:15-ին, «Ալավերդի» ԲԿ-ից հաղորդում է ստացվել այն մասին, որ «Կրծքավանդակի ձախ կողմնային պատի կտրած-ծակած թափանցող երկու վերքեր» ախտորոշմամբ Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի ճոպանուղու մոտակայքից շտապ օգնության խմբի կողմից իրենց մոտ է տեղափոխվել նույն քաղաքի 46-ամյա բնակիչը:

Ձեռնարկված անհետաձգելի միջոցառումների արդյունքում պարզվել է, որ վերջինս նշված վնասվածքները ստացել է իր ծանոթի տանը հացկերույթի ժամանակ՝ իր եւ մասնակիցներից մեկի՝ 61-ամյա համաքաղաքացու միջեւ առաջացած վիճաբանության ընթացքում: Վերջինս իր մոտ եղած դանակով չորս անգամ հարվածել է 46-ամյա տղամարդու կրծքավանդակի ձախ շրջանին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, եւ դիմել է փախուստի:

Դեպքի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննության իրականացումը հանձնարարվել է քննչական խմբին:

Նույն օրը՝ ժամը 15:43-ին, «Ալավերդի» բժշկական կենտրոնից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ հիշյալ տղամարդը մահացել է:

Նախաքննության ընթացքում կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է հանցագործության գործիք դանակը: 61-ամյա տղամարդը ձերբակալվել է եւ տվել ինքնախոստովանական ցուցմունք:

Հարցաքննվել են մի շարք անձինք, նշանակվել են դատաբժշկական, դատահետքաբանական, դատագենետիկական փորձաքննություններ: Կատարվում են քննչական եւ վարութային այլ գործողություններ՝ դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

ՎԱՐՈՐԴԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Շիրակի մարզում տեղի ունեցած ավտովթարի գործով կալանավորվել է «ՋԻԼ»-ի վարորդը: Նշենք, որ նա մեղադրվում է ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելու համար, որը անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ:

Հիշեցնենք, որ Գյումրի-Լանջիկ ավտոճանապարհին տեղի ունեցած ավտովթարի հետեւանքով տեղում մահացել է 10 ուղեւոր եւ վարորդը: 5 ուղեւորներ, ինչպես նաեւ «ՋԻԼ» ավտոմեքենայի վարորդը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել էին Գյումրու ԲԿ: Այսօր մահացել է եւս մեկ քաղաքացի:

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Shamshyan.com-ի տեղեկություններով՝ օգոստոսի 24-ին կրակոցներ են հնչել Տավուշի մարզում: ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ «Հայանտառ ՊՈԱԿ»-ի Իջեւանի անտառտնտեսության 7-րդ պահաբաժնի տարածքում Տավուշի մարզի բնակիչ 43-ամյա Արտաշես Մատինյանը ինքնաձիգից կրակոցներ է արձակել:

Ապօրինի զենք ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով Իջեւան-Դիլիջան ավտոճանապարհի «Աշոտ Երկաթ» կոչվող տարածքից ձերբակալվել եւ Ոստիկանության Իջեւանի բաժին է տեղափոխվել Ա. Մատինյանը:

Ըստ ստացված տվյալների՝ այդ օրը Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ ՊՈԱԿ»-ի տնօրենի տեղակալ, Արարատի մարզի բնակիչ 68-ամյա Սիմոն Պետրոսյանը, Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի «Հայանտառ ՊՈԱԿ»-ում որպես տնօրենի տեղակալ աշխատող, Երեւանի բնակիչ 64-ամյա Սեպուհ Քոչարյանը, նույն նախարարության գլխավոր մասնագետ, Երեւանի բնակիչ 40-ամյա Աշոտ Ավագյանը եւ Կոտայքի մարզի բնակիչ, նույն նախարարության գլխավոր մասնագետ 55-ամյա Մանվել Դավթյանը «Հայանտառ ՊՈԱԿ»-ի անտառտնտեսության 7-րդ պահաբաժնի տարածքում իրականացրել են ստուգումներ, որի ժամանակ Ա. Մատինյանի մոտ առաջացած դժգոհությունների շուրջ վիճաբանություն է տեղի ունեցել Ա. Մատինյանի եւ Ս. Պետրոսյանի միջեւ, որից հետո Ա. Մատինյանն իր մոտ պահվող ապօրինի ինքնաձիգից մի քանի կրակոցներ է արձակել օդ՝ այդկերպ փորձելով վախեցնել Ա. Պետրոյանին:

Դեպքի փաստով Ոստիկանության Իջեւանի բաժնում կազմվել են փաստաթղթեր, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչություն: Ոստիկանությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ Ա. Մատինյանին եւ հանցագործության գործիք ինքնաձիգը հայտնաբերելու ուղղությամբ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 24-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 70 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՕԳՆԱԿԱՆԻ ԿԵՂԾ ԴԻՊԼՈՄԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2019-ի գարնանը ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Չեմ ուզում մազոխիստի տպավորություն թողնել, բայց ուզում եմ տեղեկացնել, որ իմ անմիջական ցուցումով քրեական գործ է հարուցվել իմ մի մերձավոր ազգականի թույլ տված ենթադրյալ չարաշահման փաստի առիթով: Կասկած չկա, որ գործը լիարժեք կքննվի, եւ մեղավորները կենթարկվեն օրենքով նախատեսված պատասխանատվության: Սա նոր Հայաստան է, եւ վարչապետի որեւէ մերձավոր չի կարող վեր լինել օրենքից կամ լինել արտոնյալ»:

Փաշինյանն այդ գրառումը կատարել է իր քեռու տղայի՝ Տավուշի մարզի Հաղարծին գյուղի բնակիչ Մամիկոն Հովհաննիսյանի մասին: 2019թ. ապրիլի 11-ին ՀՀ քննչական կոմիտեի վարույթ է ընդունվել ինստիտուտի դիպլոմն առերեւույթ կեղծելու դեպքի առթիվ ԱԱԾ-ում հարուցված քրեական գործը, ՀՀ բնապահպանության նախարարության ««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ինժեները, 2019թ. փետրվար ամսին կադրերի բաժին ներկայացնելով Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը 1993թ. «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտությամբ ավարտելու եւ ինժեներ-մեխանիկի որակավորում ստանալու մասին դիպլոմի պատճենը, նշանակվել է հիշյալ կազմակերպությունում բաժնի պետ-տնօրենի տեղակալի պաշտոնում:

Քննությամբ տվյալներ են ձեռք բերվել՝ ՊՈԱԿ-ի ինժեների կողմից կադրերի բաժին ներկայացված դիպլոմի առերեւույթ կեղծված լինելու մասին: Դեպքի առթիվ 2019թ. ապրիլի 4-ին ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով: 2019թ. հունիսի 6-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Զոյա Զաքինյանը վճռել է Մամիկոն Նապոլեոնի Հովհաննիսյանին մեղավոր ճանաչել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասով, եւ նրան դատապարտել 200 հազար դրամի չափով տուգանքի:

Սակայն վարչապետ Նիկոլ Փաշինյանի քեռու տղային «Դիլիջան» ազգային պարկում նորից են պաշտոն տվել: ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սեմիդյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել, թե Մամիկոն Հովյաննիսյանը ներկայումս «Դիլիջան» ազգային պարկում ինչ պաշտոն է զբաղեցնում, նա ինչ կրթություն ունի: Նախարարությունից ստացված պատասխանում նշված է. «Մամիկոն Հովհաննիսյանը 2022 թվականի հունիսի 8-ից ՊՈԱԿ-ում զբաղեցնում է տնօրենի օգնականի պաշտոնը: Վերջինս ունի միջնակարգ կրթություն, աշխատանքի ընդունվելիս ներկայացրել է տեղեկանք այն մասին, որ սովորում է Հայաստանի եվրոպական համալսարանի Իջեւանի մասնաճյուղում «Կառավարում» մասնագիտությամբ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՐՔԱ՞Ն Է ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

«ԼՈՒՅՍ» հիմնադրամը վերլուծել է 2023թ. առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվությունը:

Այսպես, ՀՀ տնտեսության վրա դրական ազդեցություն ունեցող, ռուս-ուկրաինական հակամարտության հետեւանքով ձեւավորված գործոնների շնորհիվ ՀՀ-ում արձանագրվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի բարձր աճ: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ աճի տեմպերը էապես դանդաղում են: Մասնավորապես, 2023թ. հունիս ամսին տնտեսական ակտիվության ցուցանիշը, մայիս ամսի համեմատ, կրկնակի նվազել է: Տնտեսական աճը եւս դանդաղել է. աճի տեմպը 2023թ. երկրորդ եռամսյակում, առաջին եռամսյակի համեմատ, նվազել է 3.0 տոկոսային կետով եւ կազմել 9.1%, իսկ 2023թ. առաջին կիսամյակի աճի տեմպը կազմել է 10.5%, որը 2.1 տոկոսային կետով ցածր է 2022թ. տարեկան ցուցանիշից: Նկատի ունենալով վերոհիշյալը, ինչպես նաեւ վերջին շրջանում արձանագրվող որոշակի միտումները՝ չի բացառվում, որ առաջիկայում արձանագրվի աճի տեմպերի էական դանդաղում: Այս տեսակետը կիսում են նաեւ մի շարք միջազգային կազմակերպություններ, ինչպես նաեւ ՀՀ կենտրոնական բանկը, համաձայն որոնց՝ նախորդ տարվա բարձր տնտեսական աճի համեմատ՝ այս տարի սպասվում է էապես ավելի համեստ աճ, տարբեր գնահատումներով՝ 4.5-7.5%:

ՀՀ պետական բյուջեն 2023թ. առաջին կիսամյակում ունեցել է 134.3 մլրդ դրամ հավելուրդ՝ ծրագրված 125.5 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Ի դեպ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեի հավելուրդը 53.1 մլրդ դրամով ավելի փոքր էր: 2023թ. առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի կատարումը պլանից շեղվել է շուրջ 259.8 մլրդ դրամով: Սրա հիմնական պատճառը բյուջեի ծախսերի թերակատարումն է, ինչը նշանակում է, որ կառավարությունը տնտեսությունից հավաքագրում է հարկերը, սակայն չի ծախսում՝ այդպիսով նվազեցնելով տնտեսական ակտիվությունը: Մինչդեռ ներքին պահանջարկի ներկայիս կտրուկ աճի պայմաններում էապես պետք է ավելացվեն առաջարկի աճին միտված միջոցառումների իրականացմանն ուղղված ծախսերը:

Պետական բյուջեի ծախսերի շարունակական թերակատարումը մտահոգիչ է: Ծրագրվածի համեմատ թերակատարումը թե՛ բացարձակ մեծությամբ եւ թե՛ տոկոսային արտահայտությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է: Ընդ որում՝ թերակատարվել են թե՛ ընթացիկ եւ թե՛ կապիտալ ծախսերը: Կապիտալ ծախսերի ամենամեծ թերակատարումն արձանագրվել է ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով:

Նշենք նաեւ, որ կատարողականի ցածր ցուցանիշները ցույց են տալիս, որ կապիտալ ծրագրերի կառավարման եւ իրականացման խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

2023թ. առաջին կիսամյակում արձանագրված թերակատարման միտումների պահպանման պարագայում կապիտալ ծախսերը կթերակատարվեն նաեւ տարեկան կտրվածքով՝ թողնելով 2023թ. պետական բյուջեով նախատեսված ծախսերի կտրուկ աճը պարզապես «չիրականացված բարի ցանկություն»:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՕԴԻ ԱՂՏՈՏՈՒՄԸ՝ ԼՈՒՐՋ ԽՆԴԻՐ

Օդի աղտոտումը համաշխարհային խնդիր է, որը գնալով ավելի է սրվում: Տվյալներով, որոնք պարբերաբար թարմացվում են, կարելի է եզրակացնել, որ Չինաստանը պատասխանատու է ամբողջ աշխարհում արտանետումների 30% -ի համար, մինչդեռ ԱՄՆ-ն պատասխանատու է 14% -ի համար: Այսինքն՝ ամբողջ աշխարհում օդը աղտոտվում է հիմնականում այս երկրների «թեթեւ ձեռքով»:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ օդի աղտոտվածությունն ամեն տարի սպանում է մոտ 7 միլիոն մարդու: Սա պայմանավորված է նրանով, որ տասը մարդուց ինը շնչում է աղտոտվածության բարձր մակարդակ ունեցող օդ: Այլ կերպ ասած, աշխարհի բնակչության 91%-ը շնչում է այնպիսի օդ, որը չի համապատասխանում ԱՀԿ-ի չափանիշներին:

Մթնոլորտի աղտոտման հիմնական պատճառներից են գործարանների թափոնները, տրանսպորտի արտանետումները:

Իսկ ի՞նչ է կատարվում Հայաստանում: Մեզ մոտ մթնոլորի աղտոտվածության գերակշիռ մասը եւս առնչվում է տրանսպորտային արտանետումների հետ: Հայաստանի տարբեր ավտոճանապարհներին կամ ավտոճանապարհների տարբեր հատվածներին կարելի է հանդիպել նման մեքենաների, որոնց խլացուցիչ կամ, որ նույնն է, глушитель կոչվածից ծխի նման հաստ քուլա է արտանետվում մթնոլորտ:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ճշտել, թե ինչ գործուն քայլեր է կատարում ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը օդի աղտոտմանը նպաստող հանգամանքների, մասնավորապես՝ մեքենաների խլացուցիչներից արտանետվող ծխի վերացման, կանխարգելման վերաբերյալ:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնից տեղեկացրին, որ Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումը կարգավորվում է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 2410-Ն որոշմամբ:

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը հանդես է եկել վերոնշյալ որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նախաձեռնությամբ, ինչը հնարավորություն կընձեռի արդի տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացնել պատշաճ վերահսկողություն:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 20 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 22-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ո՞Վ ԿՓՈԽՀԱՏՈՒՑԻ ՎՆԱՍԸ

Օրերս համացանցում կադրեր հրապարակվեցին, որտեղ երեւում էր, թե ինչպես է անձրեւի հետեւանքով փլուզվում Wildberries-ի պահեստի տանիքը:

Տեսաձայնագրության մեջ երեւում է, որ ջրի հզոր հոսքը տանիքից լցվում է արկղերի վրա, որոնց մեջ պահվում էր ապրանքը: Ապրանքների մի մասը ջրի հոսքը տարել է պահեստի տարբեր սենյակներ:

Ռուսական «Իզվեստիա» կայքը հաղորդել էր, որ աշխատակիցները տարհանվել են, իսկ չվնասված ապրանքը տեղափոխվել է այլ պահեստներ:

Ավելի ուշ Wildberries-ը հանդես եկավ հայտարարությամբ, որում ասվում էր, որ սկսել են վերանորոգումն ու անցել բնականոն աշխատանքի:

Իսկ ու՞ր է մնացած ապրանքը, ի՞նչ ճակատագիր է սպասում նրանց:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցում է կատարել Wildberries-ի ռուսական գրասենյակին՝ ճշտելու համար, թե, ի վերջո, ուր կորավ վնասված ապրանքը, արդյոք որեւէ մեկը չի պատրաստվում փոխհատուցում տրամադրել քաղաքացիներին իրենց վնասված ապրանքների համար, եւ կա արդյոք հույս, որ մի օր այդ ապրանքները կհասնեն իրենց հասցեատերերին, ինչին ի պատասխան՝ օնլայն խանութի ղեկավարությունը լռում է:

ԱՃԻ ԿՐԿՆԱԿԻ ՆՎԱԶՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 2023 թվականի հունիս ամսին տնտեսական ակտիվության ցուցանիշը, մայիս ամսի համեմատ, կրկնակի նվազել է: Տնտեսական աճը եւս դանդաղել է. աճի տեմպը 2023 թվականի երկրորդ եռամսյակում, առաջին եռամսյակի համեմատ, նվազել է 3.0 տոկոսային կետով եւ կազմել 9.1%, իսկ 2023 թվականի առաջին կիսամյակի աճի տեմպը կազմել է 10.5%, որը 2.1 տոկոսային կետով ցածր է 2022 թվականի տարեկան ցուցանիշից: Նկատի ունենալով վերոհիշյալը, ինչպես նաեւ վերջին շրջանում արձանագրվող որոշակի միտումները՝ չի բացառվում, որ առաջիկայում արձանագրվի աճի տեմպերի էական դանդաղում: Հավելենք, որ այս տեսակետը կիսում են նաեւ մի շարք միջազգային կազմակերպություններ, ինչպես նաեւ ՀՀ կենտրոնական բանկը, համաձայն որոնց՝ նախորդ տարվա բարձր տնտեսական աճի համեմատ՝ այս տարի սպասվում է էապես ավելի համեստ աճ, տարբեր գնահատումներով՝ 4.5-7.5%:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ՝ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի եւ ՌԴ տնտեսական զարգացման նախարար Մաքսիմ Ռեշետնիկովի մասնակցությամբ տեղի ունեցավ Հայաստանի եւ Ռուսաստանի գործարար համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպում, որի ընթացքում քննարկվեցին ոլորտում առկա խնդիրները, դրանց լուծումները եւ հետագա համագործակցության քայլերը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հանդիպումը կայացավ Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակում, որի ընթացքում նախատեսված են նաեւ մի շարք հանդիպումներ գործարարների համար:

Նախարար Քերոբյանն ընդգծեց, որ մինչ գործարարների հետ հանդիպումը ՌԴ տնտեսական զարգացման նախարարի հետ քննարկվել են մի շարք հարցեր՝ կապված ներդրումների, համատեղ նախագծերի եւ լոգիստիկայի հարցերի հետ:

«Մեկ տարի առաջ մենք (ՌԴ էկոնոմիկայի նախարարի հետ) համաձայնագիր ստորագրեցինք Հայաստանում ռազմավարական զարգացման կենտրոն հիմնելու մասին, մեկ տարվա ընթացքում բավական լավ աշխատանք է տարվել: Մենք փոխառել ենք Ռուսաստանի դրական փորձը մի շարք ոլորտներում՝ մեր կառավարության որոշ ծրագրեր առաջ մղելու համար»,-ասաց նախարարը:

Մաքսիմ Ռեշետնիկովը, անդրադառնալով գործարարների հետ հանդիպմանը, ընդգծեց, որ շատ հետաքրքիր եւ կարեւոր հանդիպում էր, քանի որ գնալով մեծանում են երկու երկրների միջեւ շփումները, ապրանքաշրջանառությունը, համատեղ ներդրումները եւ հետաքրքրությունները:

Հավելենք, որ նախարարը նշեց նաեւ, որ բիզնես նախաճաշի ընթացքում բարձրացվել են հարցեր՝ կապված մակրոէկոնոմիկայի, երկրի տնտեսական քաղաքականության հետ:

Ռեշետնիկովն էլ իր հերթին հիշեցրեց, որ ռուբլու եւ դրամի փոխարժեքները խիստ տատանում են գրանցել. ռուբլու փոխարժեքը դրամի նկատմամբ դրամատիկ անկում է ապրել, եւ դա որոշակի մտահոգություն է առաջացնում Ռուսաստան արտադրանք արտահանող հայ գործարարների մոտ:

Երկու երկրների գերատեսչությունների ղեկավարները հանդիպման ընթացքում փորձել են քննարկել մակրոտնտեսական իրավիճակն ու որոշակի գնահատականներ տալ: Մասնավորապես, Ռեշետնիկովը նշեց, որ սա ընթացիկ իրավիճակ է, այն ռազմավարական խնդիրները չի չեղարկում, իսկ ռազմավարական խնդիրները փոխադարձ ներդրումներն են, նոր նախագծերը եւ համագործակցությունը:

Նշենք նաեւ, որ նա նաեւ խոսեց Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ինտենսիվ ապրանքաշրջանառությունից՝ նշելով, որ ընթացքում, իհարկե, հարցեր առաջանում են, որոնք անհրաժեշտ է լինում պարզաբանել համապատասխան գերատեսչությունների հետ:

«Քննարկվեցին նաեւ ավանդական հարցերը՝ տրանսպորտի, մաքսակետի, նոր մոտեցումների եւ նոր ուղիների մասին: Դրանք կան, բայց երբ առկա է նման մեծ եւ ինտենսիվ ապրանքաշրջանառություն, անհրաժեշտ է համապատասխան կողմերի հետ մշտապես վերահսկել այն»,- ասաց ՌԴ տնտեսական զարգացման նախարարը:

Մաքսիմ Ռեշետնիկովն ընդգծեց, որ նախարար Քերոբյանի հետ քննարկմանը պայմանավորվել են, որ մեծ պատասխանատվությամբ այս բոլոր հարցերը կվեցնեն իրենց վերահսկողության տակ, բիզնեսին սպառիչ պարզաբանումներ կտան, անհրաժեշտության դեպքում էլ որոշակի պահեր կշտկեն:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՔՈՎԻԴԻ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԱՀԿ-ԻՑ

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հայտնել է, որ հուլիսի 24-ից մինչեւ օգոստոսի 20-ն աշխարհում ավելի քան 1,47 մլն մարդ է վարակվել կորոնավիրուսով, մահացել է 2059 մարդ: Հիվանդացածների թիվը, նախորդ 28 օրվա համեմատությամբ, աճել է 63%-ով, իսկ մահացությունների թիվը նվազել է 48%-ով:

Հուլիսի 24-ից մինչեւ օգոստոսի 20-ը հիվանդացության 112%-ով աճ է գրանցվել Արեւելամիջերկրածովյան տարածաշրջանում: Հիվանդացության ցուցանիշն աճել է նաեւ Արեւմտախաղաղօվկիանոսյան տարածաշրջանում (+ 88%) եւ Եվրոպայում (+ 12%): Միեւնույն ժամանակ Աֆրիկայում գրանցվել է հիվանդացության 84 %-ով նվազում:

Չորս շաբաթվա ընթացքում մահացության աճ է գրանցվել միայն Արեւելամիջերկրածովյան տարածաշրջանում՝ 70%-ով:

Քովիդի պատճառով արտակարգ դրության ռեժիմը համաշխարհային առողջապահության բնագավառում գործել է 2020 թվականի հունվարի վերջից մինչեւ 2023 թվականի մայիսի 5-ը: ԱՀԿ-ի՝ 2023 թվականի օգոստոսի 16-ի տվյալներով՝ աշխարհում, ընդհանուր առմամբ, գրանցվել է կորոնավիրուսով վարակման 769 806 130 դեպք, մահացել է 6 955 497 մարդ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՄԵՑՎԵԼ

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հրդեհային անվտանգության մասնագետները հրդեհատեխնիկական հետազոտություններ էին իրականացրել Երեւանի Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների եւ Աբելյան փողոցների խաչմերուկ, Շինարարների եւ Ջանիբեկյան փողոցների խաչմերուկ, Շինարարների եւ Ջանիբեկյան փողոցների խաչմերուկ (Շինարարների 35 հասցեի դիմաց) հասցեներում գործող բենզալցակայանների նկատմամբ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հաղորդում են ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության եւ հանրության հետ տարվող աշխատանքների բաժնից:

Հետազոտության արդյունքում հայտնաբերվել էին հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին անմիջական սպառնալիք ներկայացնել մարդկանց կյանքի, առողջության եւ անվտանգության համար: Տեսչական մարմնի ղեկավարը բենզալցակայանների շահագործումը դադարեցնելու որոշումներ էր կայացրել:

Տեսչական մարմնի, Երեւանի քաղաքապետարանի եւ Ներքին գործերի նախարարության համատեղ իրականացրած միջոցառման արդյունքում նշված բենզալցակայանների գործունեությունը փաստացի դադարեցվեց, եւ դրանք ապամոնտաժվեցին:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՂԱՐԿՎԵՑ ՀԱՄԵՐԳԸ

Օգոստոսի 30-ին Երեւանում նախատեսվում էր երգիչ Անդրոյի համերգը: Քազմաթիվ երկրպագուներ երկար ժամանակ սպասում էին սիրելի արտիստի համերգին, տոմսերը գնված էին, երգիչն էլ հայտարարել էր, որ Հայաստանում լինելու, ելույթ ունենալու մասին երազել էր դեռ վաղուց ու երկար տարիներ:

Թվում էր, թե ամեն ինչ պատրաստ է համերգի համար, սակայն «շաբաթն ուրբաթից շուտ եկավ»: Մեդիայում սկսվեց քննադատության մեծ ալիք՝ կապված Անդրոյի ազգության, նրա լեյբլի՝ ադրբեջանական ծագման եւ այլնի մասին:

Առավել մեծ տարածում գտավ TikTok հավելվածում տարածվող հոլովակը, որում երիտասարդը զարմացած հարցնում էր, թե արդյոք կարող էինք երբեւէ պատկերացնել, որ ադրբեջանական լեյբլի աստղը կարող է համերգ ունենալ Հայաստանում, որին կմասնակցեն մեծ թվով հայեր:

Քննադատության արդյունքում համերգը չեղարկվեց, արտիստն իր ինստագրամյան էջում հայտնեց, որ տոմսերի գումարները կվերադարձվեն: Անդրոյի նման անտարբեր արձագանքը կարծես կիսատ լիներ այս պարագայում, սակայն շուտով նա հայտնեց իր վրդովմունքի մասին:

Նա հրապարակել է արխիվային լուսանկար՝ կից գրելով. «Գնչուները Եվրոպայում, նաեւ Ասիայում, Հյուսիսային Աֆրիկայում, Հյուսիսային եւ Հարավային Ամերիկայում եւ Ավստրալիայում ապրող էթնիկ ժողովուրդ են: Նրանք ծագում են հյուսիսային Հնդկաստանից:

Ներկայումս գնչուները ապրում են Երեւանում (Սարի թաղ, Քանաքեռ, Մարաշ) Գյումրիում (Բոշի մայլա)...»:

Ապա անդրադառնալով շշուկներին՝ գրել է, որ գնչուները այլ մարդիկ են, նրանք թուրքերին չեն պատկանում՝ հաջորդ սթորիում նշելով, որ RAAVA լեյբլը գնչուական է:

Անդրոն բարկությունն է արտահայտել՝ չեղարկված համերգի հետ կապված՝ նշելով, որ մենք բոլորս ապրում ենք մի երկնքի տակ. արդյոք բա՞րդ է դա հասկանալ, ու վիրավորական է, երբ մի խումբ ապուշների պատճառով իրեն արգելում են կիսվել սիրով, երաժշտությամբ, զգացմունքներով, միասնությամբ:

Վերջում Անդրոն եւս մեկ անգամ ցույց է տվել իր զայրույթը՝ նշելով որ իր թիմում կան տարբեր ազգության մարդիկ, այդ թվում՝ հայեր:

Արձանագրենք նաեւ, որ հուլիսի 22-ին համերգով Հայաստանում հանդես եկավ նաեւ Ինստասամկան, որը Հայաստան այցելությունից ամիսներ առաջ՝ մայիսի 12-ին, եղել էր Բաքվում՝ առաջին անգամ ելույթ ունենալով, ապա հայտարարել էր. «Լավագույն մարդիկ աշխարհում ապրում են Բաքվում»:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

Ի ՀԻՇԱՏԱԿ ՀԱՅԿՈՅԻ ⇨

Օգոստոսի 25-ին սիրո երգիչը՝ Հայկոն, կդառնար 50 տարեկան: Բազմաթիվ հայ հայտնիներ շնորհավորել են երգչի երկնային ծնունդը, իսկ Հայկոյի նախկին կինը՝ Անահիտ Սիմոնյանը, ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում հրապարակել է Հայկոյի եւ Արմանի համատեղ լուսանկարները՝ շնորհավորելով նրան:

«Հայկո՛, դու եղել ես լավագույն հայրը մեր որդու համար»,- գրել է Անահիտը:

Նշենք նաեւ, որ երեկ Օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում Սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ տեղի ունեցավ մեծ համերգ՝նվարված մեծ երաժշտի 50-ամյակին: Հայտնի մենակատարներ եւ արտիստներ նոր շունչ տվեցին Հայկոյի ստեղծագործություններին:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԿԱՎԱՌԱԿԻ ՄԱՍ

«Գրեմմի»-ի առաջադրված կոմպոզիտոր Հայկ Բոյաջյանի «Վարիացիաներ՝ Բախի թեմայով, դաշնամուրի համար» ստեղծագործությունը դարձել է վերջերս Գերմանիայում թողարկված հայ վիրտուոզ դաշնակահար Արմեն-Լեւոն Մանասերյանի Sustain Vol. 3 սկավառակի մաս: Այս մասին հայտնում է The Armenian Mirror-Spectator-ը:

Մանասերյանը ծնվել է Երեւանում, բնակվում է Բոննում: Մամուլը Բոյաջյանի ստեղծագործությունն անվանել է շատ քնքուշ, անսովոր:

«Նկատի ունեցեք, որ սա 21-րդ դարի ստեղծագործություն է՝ հիմնված բարոկկո ժամանակաշրջանի ձայնագրության տեսության վրա: Աշխատանքը, զարգանալուն զուգընթաց, սկսում է ավելի ու ավելի հարազատ հնչել՝ չնայած ավանգարդ ներդաշնակություններին եւ էներդոնիկ գրությանը: Սա իսկապես ցնծություն է»,- գրել է Կոլորադոյի համալսարանի քննադատ եւ երաժշտագետը:

Մանասերյանը Բոյաջյանի վարիացիաների հետ համեմատելու համար կատարեց Բեթհովենի հայտնի 32 վարիացիանները բնօրինակ թեմայով: Նա կրկնել է Բրյուսելի ծրագիրը. Մանասերյանը հաճախակի կատարում է Բոյաջյանի դաշնամուրային երաժշտությունը:

Պատահականորեն Բոյաջյանը վերջերս դարձավ մեկ այլ նախագծի անդամ: Information Age Publishing, Inc. հրատարակչության կողմից հրապարակված «Բանավոր պատմական պատմությունների ուժը» գիրքը ներառում է Բոյաջյանի կյանքի պատմության մասին գլուխ:

Բոյաջյանի պատմությունը սկսվում է նրա ծնողներից՝ 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը վերապրածներից:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Նոա»-ն պայմանագիր է կնքել Հայաստանի ազգային հավաքականի 32-ամյա պաշտպան Հովհաննես Համբարձումյանի հետ:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել է ակումբի մամուլի ծառայությունից: Նշենք նաեւ, որ նա «Բանանց»-ի (ներկայիս «Ուրարտու»-ի) սան է, հանդես է եկել Հյուսիսային Մակեդոնիայի բազմակի չեմպիոն «Վարդար»-ում:

Վերջին ակումբը եղել է «Անորտոսիս»-ը, կիպրական թիմի կազմում նա անցկացրած 86 խաղերում դարձել է 8 գոլի եւ գոլային 12 փոխանցման հեղինակ:

Հայաստանի ազգային ընտրանու կազմում անցկացրած 50 հանդիպումներում Համբարձումյանը դարձել է 4 գոլի հեղինակ:

ԶԱԽԱՐՅԱՆԸ ԶԱՐՄԱՑՐԵԼ Է

Իսպանական «Ռեալ Սոսիեդադի» իսպանացի գլխավոր մարզիչ Իմանոլ Ալգուասիլը դրական է արտահայտվել իր ղեկավարած թիմի նորեկ, Ռուսաստանի հավաքականի կիսապաշտպան Արսեն Զախարյանի մասին: 20-ամյա ֆուտբոլիստը հայտավորված է «Լաս Պալմասի» դեմ հանդիպմանը:

«Արսեն Զախարյանն ինձ զարմացրեց, բայց ոչ թե իր խաղամակարդակով, այլ նոր թիմում արագ հարմարվելու ընդունակությամբ: Լավ ֆուտբոլիստները շատ արագ են հարմարվում նոր պայմաններին: Թեեւ նա լավ չգիտի անգլերեն, բայց ամեն ինչ շատ արագ ընկալեց:

Արսեն Զախարյանն ունի մեծ ներուժ եւ գերազանց բնավորություն, թեեւ նա ընդամենը 20 տարեկան է: Եթե ոչ մի վատ բան տեղի չունենա, նա կդառնա հրաշալի ֆուտբոլիստ:

Շնորհակալ եմ Վալերի Կարպինին, որ չկանչեց Զախարյանին հավաքական, որպեսզի նա ավելի լավ հարմարվի ակումբում»,- Իմանոլ Ալգուասիլի խոսքը մեջբերում է El Desmarque-ը:

ԿԱՎԱՐՏԻ ԿԱՐԻԵՐԱՆ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի եւ Լիսաբոնի «Բենֆիկայի» 35-ամյա կիսապաշտպան Անխել Դի Մարիան մտադիր է հաջորդ տարի ավարտել կարիերան ազգային թիմում:

«Ամերիկայի գավաթը կլինի վերջին մրցաշարը հավաքականում ինձ համար: Հույս ունեմ, որ Սկալոնին ինձ կհրավիրի այդ մրցաշարին: Միշտ սպասում ես հրավերի՝ հասկանալով, որ այն կարող է լինել, կարող է եւ չլինել: Ոչ մեկի համար տեղն ազգային հավաքականում երաշխավորված չէ»,- Դի Մարիայի խոսքը մեջբերում է DSports Radio-ն:

Ամերիկայի գավաթը կանցկացվի 2024 թվականին ԱՄՆ-ում: Արգենտինայի հավաքականը կպաշտպանի տիտղոսը:

● *Օգոստոսի 28-ին «Մեggn» ակումբում տեղի կունենա YereOne Projeձt-ի համերգը: Տոմսերի արժեքը՝5000 դրամ: Սկիզբը՝ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԲՈՂՈՔ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս բողոքել հյուպատոսական բաժնի աշխատակիցների վերաբերմունքի կամ դիմումի հանձնման գործընթացի վերաբերյալ:

Էրիկ Շմավոնյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Շենգեն վիզայի համար դիմող անձինք պատուհանի մոտ սպասարկման առնչությամբ հյուպատոսական բաժնի աշխատակիցների վերաբերմունքի կամ դիմումի հանձնման գործընթացի վերաբերյալ իրենց բողոքները կարող են ներկայացնել կոնտակտային ձեւաթղթի միջոցով: Խնդրում ենք կոնտակտային ձեւաթղթում որպես հասցեատեր ընտրել Beschwerde zum Schengen-Visum-Verfahren տարբերակը: Ընդ որում՝ խնդրում ենք նկատի ունենալ, որ բողոքները կարող են ներկայացվել միայն գերմաներեն կամ անգլերեն: Այլ լեզուներով ներկայացված բողոքները չեն կարող քննության առնվել: Այլ հարցերով բողոքները չեն կարող քննության առնվել նշված էլփոստի հասցեի միջոցով: Խնդրում ենք կոնտակտային ձեւաթղթի Betreff («Առնչություն») դաշտում նշել հետեւյալ տարբերակը.

«Բողոք վիզայի դիմումներն ընդունելիս կամ հեռախոսային խորհրդատվության ընթացքում աշխատակիցների ցուցաբերած վարքի վերաբերյալ»:

ՀՀ-ում Գերմանիայի դեսպանատուն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բողոքների համար նախատեսված կոնտակտային ձեւաթղթերը նախատեսված չեն վիզա չտրամադրելու, վիզան չեղյալ համարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքարկումներ (ռեմոնստրացիա) ներկայացնելու համար:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

ՀԱՐՑ. Ի՞նչ պետք է անել պատվաստումից առաջ:

Արտակ Դավթյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պատվաստումից առաջ բժիշկը պետք է գնահատի երեխայի առողջական վիճակը: Գնահատման արդյունքում եթե երեխան առողջ է, կատարվում է պատվաստում, իսկ եթե հայտնաբերվում է որեւէ ախտաբանական երեւույթ, ապա պատվաստումը հետաձգվում է մինչեւ երեխայի առողջանալը:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պատվաստումից առաջ չի կարելի երեխային տալ ջերմիջեցնող դեղորայք եւ հակաալերգիկ դեղորայք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

«Ժողովուրդ» օրաթերթը շրջել է Երեւանի կենտրոնական թաղամասերով եւ ֆիքսել, որ թաղապետարանի կատարած աշխատանքների թերացումների պատճառով քաղաքի որոշ հատվածներում աղբամանից դուրս կան աղբի կուտակումներ, ինչը գցում է մայրաքաղաքի տեսքը: Քաղաքի կենտրոնում նման վիճակից կարելի է ենթադրել ծայրամասերում գտնվող թաղամասերի տեսքի ավելի վատթար լինելը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 6 + 10 +22 + 27
Կոտայքի լեռներ	+ 7 + 9 +20 + 24
Կոտայքի նախալեռներ	+15 + 17 +27 + 29
Գեղարքունիք	+7 + 10 +20 + 23
Լոռի	+ 7 + 11 +23 + 27
Տավուշ	+12 + 17 +24 + 29
Արագածոտնի լեռներ	+6 + 8 +20 + 23
Արագածոտնի նախալեռներ	+14 + 17 + 36 + 31

Արարատ	+15 + 19 +31 + 33
Արմավիր	+14 + 16 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +21 + 23
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 21 +30 + 32
Սյունիքի հովիտներ	+16 + 21 +27 + 31
Սյունիքի նախալեռներ	+ 9 + 13 +20 + 22
ԼՂՀ	+16 + 19 +25 + 28
Երեւան	+23 + 25 +30 + 32

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.8.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*